ԱԼԲԵՐՏ ԴԱՋԱՐՅԱՆ

ԳԻՏԵԼԻՔԻ ԱՃԻ ԻՄՐԵ ԼԱԿԱՏՈՍԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Իմրե Լակատոսը (1922-1974) փիլիսոփաների շրջանում հայտնի է իբրև Կ. Պոպերի աշակերտ, «քննադատական ռեալիզմի» ներկայացուցիչ և առանձնահատուկ մեթոդաբանական կոնցեպցիայի հեղինակ:

Գիտական գիտելիքի աճի հիմնահարցը գիտելիքաբանության՝ գիտության փիլիսոփայության ամենակարևոր ու հետաքրքիր խնդիրներից մեկն է, որն անխտիր հետաքրքրում է բոլոր մեթոդաբաններին, գիտնականներին և մտածողներին: Բնականաբար այդ հարցի նկատմամբ անտարբեր լինել չէր կարող նաև Ի. Լակատոսը: Ստեղծագործական գործունեության սկզբնական շրջանում, վերլուծելով XVII-XIX դարերի մաթեմատիկայի պատմությունը, նա մշակել է կռահումների և հերքումների առանձնահատուկ տրամաբանություն, այնուհետև հանգել է գիտական գիտելիքի աճը միմյանց մրցակից գիտահետազոտական ծրագրերով բացատրելու գաղափարին: Գիտելիքի աճի՝ Ի. Լակատոսի ուսմունքը տարբերվում է Կ. Պոպերի համապատասխան ուսմունքից այն բանով, որ նա խիստ բաժանարար գիծ չի անցկացնում գիտության և մետաֆիզիկայի միջև: Բացի այդ, թեև Ի. Լակատոսի ուսմունքի հիմքում ընկած է Կ. Պոպերի ֆալսիֆիկացիայի սկզբունքը, սակայն նա փորձել է մեղմելով պահպանել ֆալսիֆիկացիայի հիմնական իմաստը և այն ավելի է մոտեցրել գիտության իրական պատմությանը:

Գիտության պատմությունը նա բաժանել է երկու շրջանի՝ չհասունացած գիտություն, որը իրականացված փորձերի և սխալների գործընթաց է և հասուն գիտություն, որը մրցակից հետազոտական ծրագրերի փոփոխման ընթացք է: Միաժամանակ հասուն գիտությունը կանխատեսում է նախկինում անհայտ փաստերը, կանխագուշակում նոր օժանդակ տեսությունները, օժտված է էվրիստիկական ուժով և ունի տեսական ինքնուրույնություն[1]:

Այսպիսով, եթե Կ. Պոպերի ուսմունքում գիտական գիտելիքի աճի հիմնական միավորը առանձին տեսությունն է, ապա Ի. Լակատոսի համար այդպիսի միավոր է գիտահետազոտական ծրագիրը: Գիտելիքի այդ միավորի

[1] Տե՛ս И. Лакатос, Методология научных исследовательских программ. "Вопросы философии", М., 1995, N 4, էջ 147:

միջոցով նա փորձել է լուծել գիտական գիտելիքի աճի անընդհատականության և գիտությանը հատուկ առողջ պահպանողականության հարցը. մի բան, որը լիարժեք լուծում չի ստացել Կ. Պոպերի ուսմունքում: Այդ կապակցությամբ նա գրում է. «Կոնցեպտուալ կմախքը, որի շրջանակներում Թ. Կունը փորձում է բացատրել գիտության զարգացման անընդհատականությունը, փոխառնված է սոցիալական հոգեբանությունից, իսկ ես նախընտրում եմ գիտելիքաբանության (էպիստեմաբանության) նկատմամբ նորմատիվ մոտեցումը»: Այնուհետև Ի. Լակատոսը շարունակում է. «Գիտության անընդհատականությանը ես նայում եմ «պոպերյան ակնոցով»: Ուստի այնտեղ, որտեղ Թ. Կունը տեսնում է «պարադիգմաներ», ես տեսնում եմ ռացիոնալ «հետազոտական ծրագրեր»[2]:

Ըստ Ի. Լակատոսի, գիտելիքի, որի նկատմամբ կիրառելի է աճի գաղափարը, հիմնական միավորը հետազոտական ծրագիրն է, որը միավորիչ գաղափար է և ունի էվրիստիկական ուժ: Բացի այդ, հետազոտական ծրագիրը այնպիսի տեսությունների համախմբություն, հաջորդափոխություն, ժառանգորդում է, որոնք կապված են միմյանց հիմնարար գաղափարների և սկզբունքների ընդհանրությամբ: Հետազոտական ծրագրերը ձևավորված են մեթոդաբանական կանոններից. դրանց որոշ մասն այն կանոններն են, որոնք նշում են, թե հետազոտական ինչ ճանապարհներից է անհրաժեշտ խուսափել (բացասական էվրիստիկա), մյուս մասն այն կանոններն են, որոնք նշում են, թե ինչ ուղիներ է անհրաժեշտ ընտրել և ինչպես կարելի է դրանց հասնել (դրական էվրիստիկա)[3]:

Նույնիսկ գիտությունը որպես այդպիսին, գրում է նա, կարող է դիտարկվել իբրև հսկայական հետազոտական ծրագիր, որը ենթարկվում է Կ. Պոպերի հիմնական էվրիստիկական կանոնին. «առաջադրիր այնպիսի վարկածներ, որոնք ունեն ավելի մեծ էմպիրիկ բովանդակություն, քան նախկինները»[4]:

Ի. Լակատոսի վարկածների համաձայն՝ ոչ միայն պետք է լրացուցիչ էմպիրիկ բովանդակությունը հաստատվի փորձնական եղանակով, այլև վարկածները պետք է առաջադրվեն հետազոտական ծրագրի դրական էվրիստիկայի համապատասխան:

Բոլոր հետազոտական ծրագրերը, նրա կարծիքով, ունեն այնպիսի «կարծր միջուկ», որ բացասական էվրիստիկան արգելում է modus tollens կիրառել «կարծր միջուկի» պնդումների նկատմամբ: Հետազոտական ծրագրի «կարծր միջուկը» ներառում է միայն այդ ծրագրին բնորոշ, կոնվենցիալորեն

---

[2] Նույն տեղում, էջ 148:
[3] Տե՛ս նույն տեղը, էջ 135:
[4] Նույն տեղում:

ընդունված, հիմնարար ենթադրությունները: Միաժամանակ հետազոտական ծրագրերի «կարծր միջուկները» գոտևորված են օգնական վարկածներով, որոնք այդ միջուկների շուրջը ստեղծում են պաշտպանիչ գոտիներ: Ի տարբերություն «կարծր միջուկի» պաշտպանիչ գոտին շարժուն է և ստուգումների հետևանքով կարող է անընդհատ փոփոխվել, ձևափոխվել, հարմարվել, լրիվ փոխարինվել: հետազոտական ծրագրի «կարծր միջուկը» պաշտպանելով ստուգումների հարվածներից, նրա նկատմամբ տրամաբանական modus tollens կանոնի կիրառումից: Եվ եթե այդ ամենը նպաստում է պրոբլեմի առաջադիմական տեղաշարժին, ապա հետազոտական ծրագիրը կարելի է հաջողված համարել[5]:

Ինչպես նկատելի է, Ի. Լակատոսի մոտեցումը բավականին տարբերվում է Կ. Պոպերի մոտեցումից: Կ. Պոպերի կարծիքով, եթե վարկածը հանդիպում է հերքող փաստերի, ապա պարտադիր պետք է դեն նետվի: Ի տարբերություն այդպիսի մոտեցման՝ Ի. Լակատոսը գտնում է, որ «հետազոտական ծրագիրը» հերքող փաստի հանդիպելիս, ի հաշիվ պաշտպանիչ գոտու փոփոխման, կարող է պահպանել իր կայունությունը, այսինքն՝ օժտված է առողջ պահպանողականությամբ: Մեր կարծիքով, այդպիսի հարաբերական կայունություն ունի ոչ միայն «հետազոտական ծրագիրը», այլև գիտական տեսությունը, որը շարքային վարկածներից տարբերվում է հենց այդպիսի հարաբերական կայունությամբ ու հավաստիությամբ: Այն իր նմանների հետ միասին կարող է պատկանել համապատասխան «հետազոտական ծրագրին»: Բացի այդ, «հետազոտական ծրագիրը» իր սկզբունքներով գիտական տեսությունների փոխադարձ կապը, անընդհատականությունը ապահովող հիմքերից մեկն է և ոչ միակը:

Գիտական տեսությունների անընդհատականությունը ապահովող այլ միջոցներ կարող են համարվել տվյալ ժամանակաշրջանի պարադիգման, աշխարհի գիտական պատկերը, սոցիալ-մշակութային համակարգը, աշխարհայացքը, մտածողության ոճը, տվյալ բնագավառի էմպիրիկ փաստերի ամբողջականությունը, նոր տեսության հասկացական ապարատը հին տեսության հասկացական ապարատով սահմանելը, նրանից բխեցնելը, նրանց համար ընդհանուր ինվարիանտների, թվային մեծությունների, մոդելների և այլնի գոյությունը:

Անշուշտ, տեսությունները միմյանց հերթափոխող գիտելիքների զանգվածներ չեն: Յուրաքանչյուր վարկածի առաջադրումը բարդ ինտելեկտուալ

---

[5] Նույն տեղում, էջ 136:

գործունեության արգասիք է: Սակայն, երբ վարկածները հիմնավորվում են, պարզվում է, որ նրանց միջև կա ընդհանրություն, անընդհատականություն: Նրանք պատկանում են ինչ-որ ինֆորմացիոն, իմաստային ամբողջականությունների: Ահա ամբողջականություն ապահովող այդպիսի միավորներից մեկը կարելի է համարել «հետազոտական ծրագիրը»:

Ի. Լակատոսի կարծիքով, «հետազոտական ծրագիրը» կարող է ունենալ ինչպես առաջադիմական, այնպես էլ՝ հետադիմական տեղաշարժ: «Հետազոտական ծրագրի» առաջադիմական տեղաշարժի դեպքում նրա յուրաքանչյուր հաջորդ քայլը նպաստում է պրոբլեմի առաջադիմությանը. թույլ է տալիս կանխատեսելու նոր փաստեր, ավելացնում է «հետազոտական ծրագրի» էմպիրիկ բովանդակությունը: Ի. Լակատոսը, որպես «հետազոտական ծրագրի» հաջողված օրինակ, նշում է Նյուտոնի ձգողականության տեսությունը: Նրա խոսքերով, Նյուտոնը ամեն մի դժվարություն դարձրեց իր ծրագրի հաղթանակը[6]:

Գիտնականները նոր մոդելները ձևավորում են «կարծր միջուկին» համապատասխան, ուստի ուշադրություն չեն դարձնում դրան չհամապատասխանող հակաօրինակներին: Հաջողված «հետազոտական ծրագիրը» լուծում, «մարսում է» հակաօրինակները, Թ. Կունի արտահայտությամբ՝ «անոմալիաները»: Այդ ընթացքում յուրաքանչյուր հաջողված քայլ թույլ է տալիս կանխատեսելու նոր փաստեր, որի շնորհիվ արձանագրվում է կայուն, առաջադիմական տեսական տեղաշարժ: Եթե նույնիսկ հանդիպում ենք հերքումների, ապա դրանք հաղթահարում ենք նոր սրամիտ, օժանդակ վարկածների ներմուծման միջոցով: Դրական էվրիստիկան, Ի. Լակատոսի կարծիքով, ապահովում է հետազոտության որոշակի ծրագրվածությունը, որն անկանոնությունների և հերքումների հանդիպելիս գիտնականներին փրկում է շփոթմունքից: Այս խնդրի ռացիոնալ լուծումն այն է, որ թույլ չի տալիս հերքումները տեղափոխել «կարծր միջուկի» վրա այնքան ժամանակ, քանի դեռ օժանդակ վարկածների «պաշտպանիչ գոտու» էմպիրիկ բովանդակությունը շարունակում է ավելանալ: Առանց այդպիսի պայմանի, գիտնականը ստիպված կլիներ հրաժարվելու «կարծր միջուկից»՝ չկարողանալով ստուգել դրա ներուժը, առավելությունները և նշանակությունը: Դրական էվրիստիկան նպաստում է օժանդակ վարկածների առաջադրմանը, ընդլայնում է ծրագրի կիրառման ոլորտը: «Հագեցման կետին» հասնելուց հետո «հետազոտական ծրագրի» զարգացումը դանդաղում է: Դրական էվրիստիկան կորցնում է իր ուղղորդիչ դերը: Անհամատեղելի

---

[6] Տե՛ս նույն տեղում:

փաստերը, հակասությունները կուտակվում են այդ «հետազոտական ծրագրի» մեջ: Եվ եթե տեսական բացատրությունները ետ են մնում էմպիրիկ փաստերի աճից, ապա հետազոտական ծրագիրը սկսում է ետընթաց ապրել: Առաջանում են անարդյունավետ հակասություններ: Կուտակվում են ad hoc վարկածներ, և կարծր միջուկը սկսում է քայքայվել: Հենց դրանով Ի. Լակատոսի մոտեցումը տարբերվում է Ա. Պուանկարեյի ջաստիֆիկացիոնիստական կոնվենցիոնալիզ-մից: Ի. Լակատոսը առաջարկում է հրաժարվել «հետազոտական ծրագրի» «կարծր միջուկից» այն դեպքում, եթե ծրագիրը այլևս հնարավորություն չի տալիս կանխատեսելու նոր փաստեր, երբ անոմալիաները (անկանոնություն-ները) զբաղեցնում են հետազոտությունների դաշտը: Այդ դեպքում, գտնում է նա, մրցակից «հետազոտական ծրագիրը», որը ոչ միայն բացատրում է նախորդի էմպիրիկ ոլորտը, այլև իր էվրիստիկական ներուժով գերազանցում է առաջինին, կանխատեսում է նախկինում անհայտ փաստերը: Այդ փուլով էլ ավարտվում են նախորդ հետազոտական ծրագրի զարգացման պահուստային միջոցները: Այսպիսով, ըստ Ի. Լակատոսի, գիտության զարգացումը միմյանց հաջորդափոխող, «բարձրացող» և «իջնող» «հետազոտական ծրագրերի» հաջորդափոխություն է:

Ինչպես տեսանք, ի տարբերություն Կ. Պոպերի, Ի. Լակատոսի համար ավելի մեծ նշանակություն ունի հաստատող փաստը՝ «վերիֆիկացիան», քան հերքող փաստը՝ «ֆալսիֆիկացիան»: Նա ակտիվորեն հանդես է գալիս, ինչպես ինքն է անվանում, նաիվ ֆալսիֆիկացիոնիզմի՝ ենթադրությունների և էմպիրիկ հերքումների, փորձի և սխալի պարզունակ հերթափոխման դեմ: Միաժամանակ Ի. Լակատոսը ընդունում է, որ «հետազոտական ծրագրերը» վերջ ի վերջո հերքվում են էմպիրիկ փաստերի կողմից. նրանց նկատմամբ ևս կիրառելի է Կ. Պոպերի ֆալսիֆիկացիայի սկզբունքը: Այսինքն՝ ինչպես ամեն մի գիտական տեսություն, այնպես էլ «հետազոտական ծրագրերը» ունեն սահմանափակ էմպիրիկ ինֆորմատիվ բովանդակություն: Ի սկզբանե հայտնի է, որ դրանք ի վերջո հերքվելու են. կգտնվեն այնպիսի էմպիրիկ փաստեր, որոնք դուրս են գտնվում այդ ամբողջությունների շրջանակներից: Նկատենք, որ Կ. Պոպերի այդ գաղափարը, որոշ առանձնահատկություններով, կարելի է տարածել նաև գիտելիքի շատ այլ ոլորտների վրա:

Ընդհանրացնելով ասենք, որ, այնուամենայնիվ, Ի. Լակատոսը չի քննարկում այն հարցը, թե «հետազոտական ծրագրերի» միջև կա՞ն արդյոք ժառանգորդում, փոխադարձ անցում, «անընդհատականություն», թե՞ ոչ: Նրա աշխատություններից կարելի է այն տպավորությունը ստանալ, որ գիտության զարգացումը միմյանց հետ անմիջականորեն կապ չունեցող «հետազոտական

ծրագրերի» հերթափոխություն է: Մեր կարծիքով Ի. Լակատոսի առաջ քաշած «հետազոտական ծրագրերը» գիտության բարդ կառուցվածքի շերտերից մեկն են միայն, որոնք միմյանց ժառանգորդում, պայմանավորում են:

«Հետազոտական ծրագրերի» այդ «անընդհատականությունը» ապահովվում է մի կողմից տվյալ ժամանակաշրջանի գիտական պարադիգմաների, աշխարհի գիտական պատկերի, սոցիալ-մշակութային համատեքստի, աշխարհայացքի միջոցով, իսկ մյուս կողմից՝ նրանց կողմից միավորվող վարկածների, տեսությունների և էմպիրիկ ոլորտի ամբողջությամբ:

Հարց է առաջանում, թե որո՞նք են «հետազոտական ծրագրերի» ընդունման, հաստատման չափանիշները: Չէ՞ որ նույն պրոբլեմի կապակցությամբ, Ի. Լակատոսի կարծիքով, կարող են առաջադրվել բազմաթիվ «հետազոտական ծրագրեր»: Այդ հարցը, ինչպես տեսանք, Ի. Լակատոսը հանգեցնում է հետազոտական ծրագրի էմպիրիկ բովանդակության աճին, նրա կանխատեսման ուժին:

Մեր կարծիքով, գիտելիքի այդ ձևերի վրա ևս կարելի է տարածել տվյալ «լսարանում» գիտական տեսության ընդունման, հաստատման՝ մեր կողմից առաջադրված չափանիշները[7], որոնք են՝

1) գիտական գիտելիքի ներկառուցվածքային հիմնավորվածությունը: Այդ թվում՝ գիտելիքին ներկայացվող անհակասության, լրիվության, անկախության, ճշգրտության, կարգավորվածության, պարփակության, ամբողջականության, ավարտվածության, ինքնաբավության, պարզության, ակնհայտության, նրբագեղության պահանջների միասնությունը:

2) Գիտական գիտելիքի էմպիրիկ հիմնավորվածությունը, այդ թվում՝ վերիֆիկացիայի և ֆալսիֆիկացիայի սկզբունքներին բավարարելը:

3) Գիտական գիտելիքի պրակտիկ հիմնավորվածությունը, այսինքն՝ գիտական գիտելիքի հանրագումարային, բացատրման, կանխատեսման, կիրառման և այլ գործառույթների արդյունավետությունը:

4) Գիտական գիտելիքի տեսական հիմնավորվածությունը՝ տվյալ ժամանակաշրջանի միջգիտելիքային հարաբերությունների և պարադիգմայի, աշխարհի գիտական պատկերի, սոցիալ-մշակութային համատեքստի, աշխարհայացքի մեջ ներգծվածության աստիճանը:

5) Գիտական գիտելիքի պատմական հիմնավորվածությունը, որը ենթադրում է, որ «լսարանում» ընդունելի, ճշմարիտ ճանաչված գիտելիքը

---

[7] Տե՛ս Ա. Ս. Պազարյան, Գիտական գիտելիքի աճի և ճշմարտության Կ. Պոպերի ուսմունքը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2002, N 3, էջ 113-119:

ժամանակի ընթացքում պետք է անպայման իր հիմքերն ունենա իրեն նախորդող գիտելիքի ձևերի մեջ:

Ասվածից հետևում է, որ վարկածները, տեսությունները, հետազոտական ծրագրերը գնահատելիս պետք է ելնել ոչ միայն նրանց էմպիրիկ բովանդակությունից, այլև պետք է ենթադրել, որ գիտելիքի ձևերը էմպիրիկ բովանդակությունից զատ, ունեն ավելի լայն ու բազմազան ինֆորմատիկ բովանդակություն: Հետևաբար պետք է նկատի առնել նաև այլ չափանիշների առկայությունը: Ինչ խոսք, էմպիրիկ բնագիտության մեջ որևէ խնդիր, հիմնահարց լուծելիս առաջադրված բազմաթիվ վարկածներից, հետազոտական ծրագրերից առավելությունը տրվում է նրանց, որոնք առավել չափով բավարարում են գիտական գիտելիքի էմպիրիկ և պրագմատիկ հիմնավորվածության չափանիշներին: Սակայն, եթե կան նշված պայմանները բավարարող գիտելիքի այլընտրական համակարգեր, ապա տվյալ «լսարանում» առավելություն է տրվում գիտական գիտելիքի այն ձևին, որը առավել չափով բավարարում է գիտական գիտելիքի ընդունման, ճշմարիտ ճանաչման մյուս չափանիշները:

Փիլիսոփայական գրականության մեջ հայտնի է Ի. Լակատոսի և Թ. Կունի միջև եղած բանավեճը «հետազոտական ծրագիր» և «պարադիգմա» հասկացությունների փոխհարաբերության շուրջ[8]: Զտրվելով այդ բանավեճի մանրամասներին, նկատենք, որ «հետազոտական ծրագիրը» գիտության կառուցվածքային շերտերից մեկն է և չի փոխարինում պարադիգմային: Եթե «հետազոտական ծրագիրը» ավելի դինամիկ է, հավանական, ապա «պարադիգման» ավելի կայուն, հավաստի, ընդունված, հաստատված գիտելիքի ձև է տվյալ «լսարանում» և «հետազոտական ծրագրերի» ժառանգորդումն ու անընդհատականությունը ապահովող գործոններից մեկն է: Նրանից «ավելի բարձր գտնվում են» վերացարկման ավելի բարձր աստիճաններ ունեցող, ավելի մեծ «լսարաններ» ընդգրկող, հարաբերական անկախ շերտերը՝ «աշխարհի գիտական պատկերը», «սոցիալ-մշակութային» համակարգերը, աշխարհայացքը: Ըստ այդմ կարող ենք արձանագրել, որ գիտության զարգացման գործոնները, հիմքերն են՝ էմպիրիկ իրականությունը, սոցիալ-մշակութային համատեքստը իր բազում շերտերով, գիտությանը ներքնապես հատուկ տրամաբանական կառուցվածքային ծավալումը և «լսարանի» ակտիվ գործունեությունը: Նշանակում է, որ գիտության զարգացումը մեխանիկական ծավալում չէ, այլ «լսարանի» ստեղծագործական գործունեության շղթա է: Գիտության մեջ յուրաքանչյուր նոր քայլ կատարելիս մենք գործ ունենք նորի,

---

[8] Տե՛ս "Структура и развитие науки". М., 1978, էջ 203-333:

առանձնահատուկի հետ, որի հիմքը, այնուամենայնիվ, միայն էմպիրիկ իրականությունը չէ: Կան նաև սոցիալ-մշակութային համակարգը, գիտելիքի ներկառուցվածքային առանձնահատկությունները, ինչ-որ իմաստով նախկին գիտելիքը և «լսարանի» ակտիվ գործունեությունը, որը «նյութականացնում է» այդ ինֆորմացիոն բովանդակությունը:

Ուշագրավ է նաև Ի. Լակատոսի առաջադրած «հետազոտական ծրագրի» առողջ պահպանողականության գաղափարը: Մեր կարծիքով, այդ գաղափարն իր նմանակն է ունեցել սոցիալական փիլիսոփայության մեջ, հանձին Օ. Շպենգլերի և ուրիշների ուսմունքների: Սակայն Կ. Պոպերի և Ի. Լակատոսի գաղափարները մեթոդաբանորեն ավելի հիմնավոր են: Համաձայն այդ գաղափարների՝ ցանկացած վարկած, տեսություն, «հետազոտական ծրագիր» ժամանակի մեջ ի վերջո ֆալսիֆիկացման ենթակա է, այսինքն՝ ունի սահմանափակ ինֆորմացիոն, էմպիրիկ բովանդակություն: Նույն համաբանությամբ կարող ենք պնդել, որ ցանկացած «լսարան», «սոցիալ-մշակութային համակարգ», «ֆորմացիա», «ցիվիլիզացիա» և այլն, ունեն սահմանափակ ինֆորմացիոն, մշակութային հնարավորություններ, ժամանակի ընթացքում նաև՝ վերելքի ու վայրէջքի պահեր: Սակայն այդ վայրէջքները ոչ թե բացարձակ վերջ են, այլ նոր սկիզբ, նոր վերելք: Նշանակում է, որ ինչպես գիտությունը, այնպես էլ հասարակությունը զարգանում են հատվածաբար, հավանաբար շղթաներով, նրանք միմյանց լրացնող «փակ» և «բաց» համակարգերի ծավալում են: